Մենք յոյս ունենք, որ դուք, որ անձնական և պաշտօնի պատուով երդուել էք հաւատարիմ լինել Անատոլուի և Ռումելիայի պաշտպանութեան կոմիտէին և Ազգ. Մեծ Ժողովին, որը ոչ այլ ինչ է եթէ ոչ այդ երկու հիմնարկութիւնների միութիւնը, թոյլ չէք տայ, որ այս դրութիւնը շարունակւի ապագայում էլ: Քիչ է հաւանական, որ Հայաստանը՝ զբաղուած լինելով մեր դաշնակից Ադրբէջանի կողմից, ընդունակ լինի յարձակւելու ձեր շրջանի վրա: Մալիլ փաշան, որ գտնւում է Թիւրք-ադրբէջանցի-ռուս ուժերի հրամանատարական կազմում, մեզ հանգստացնում է Մոսկւայից՝ հաւաստիացնելով, որ Հայաստանը մեր սահմանների վրա յարձակւելու դէպքում սպառնական ուժի կը հանդիպի իր թիկունքում: Հետևաբար, հարկաւոր է որ ձեր հրամանատարութեան տակ գտնւող և թիւրք բանակի պահեստի մասեր կազմող զօրաբաժինները, թողնելով մի դիւիզիա հնարաւոր անակընկալների համար, օգոստ. 1-ին մեկնեն յունական ուժերի դէմ և կենտրոնանան ձեզ յայտնի վայրերում: Ձեր չհնազանդւելը այս հրամանին շատ անբաղձալի ազդեցութիւն կունենայ յունական ուժերի դէմ վճռական կռւի պատրաստւող զինւորների վրա:

Այն նկատումները, որոնցով Դուք հիմնաւորում էք Ձեր անջատ ձգտումները, նկատի առնւած են Ազգային Մեծ Ժողովի կողմից: Ձեր առաջարկութիւնը, թէ անհրաժեշտ է որոշ զինւորական շրջանակի մէջ մտցնել ոչ մի կարգապահութեան չենթարկւող աւազակների կազմակերպութեան գործերը, Ժողովի կողմից հաւանութիւն է գտած և անհրաժեշտ կարգադրութիւններն այդ ուղղութեամբ արւած են յուլիս 16-ին: Մեծ Ազգային Ժողովը վճռեց նոյնպէս, որ Սելահէդդին բէյը մնայ Սրվազի զօրաբաժնի հրամանատար:

Այս պատմական վայրկեանին, երբ մենք շրջապատւած ենք վրէժխնդիր թշնամիներով, Ձեր վրա է ընկնում դրութեան ծանրութեան պատասխանատուութիւնը: Այդ ծանրութիւնը նմանը չունի պատմութեան մէջ և մեր ամբողջ յոյսը Ժողովրդի ինքնապահպանութեան գաղացումի վրա է: Ձեր անջատ ձգտումների պաշտպանութեամբ, Դուք բաժան-բաժան կանէք մեր ուժերը և կարժանանաք ապագայ սերունդների անէծքին:

Քանի որ, Ձեր բացատրութիւնները նկատողութեան առնւած են Ժողովի կողմից և մատնանշւած միջոցները կիրառւում են, ես հաւատացած եմ, որ Դուք չպիտի հրաժարւէք գործելու մեզ հետ համերաշխութեամբ: Հակառակ պարագային, Ձեր անջատ քայլերը, որոնց արդարացում չկայ, կը դիտւեն իբրև դաւաճանութիւն: Հաղորդում եմ Ձեզ նոյնպէս, որ բարձր հրամանատարութիւնը Ձեզանից սպասում է հեռագրական պատասխան երկու օրւայ ընթացքում»:*)

Այնուհետև ի՞նչ անցաւ-դարձաւ Անդորայի և Քեազիմ Կարաբեքիր փաշայի միջև: Այդ մասին պատմում էր Պոլսի «Ժուրնալ Դ'Օրիան» թերթի Անդորայի թղթակիցը, հոկտ. 19-ի համարում. «Ձեզ հաւանօրէն յայտնի չեն, գրում էր նա, այն պատրաստութիւնները, որոնք նախորդեցին Հայաստանի վրա յարձակում գործելու որոշման:

Էրզրումի 15րդ զօրաբաժնի հրամանատար Քեազիմ Կարաբեքիրը սեպտ. 7-ին հասաւ Անդորա: Հետևեալ օրը Մուստաֆա Քեմալի նախագահութեամբ գումարւեց զինւորական գերագոյն խորհուրդ, որին մասնակցեցին Ահմէդ Ֆէվզի, Մուհէդդին Ալի Ֆուատ, Նիհատ, Նուրէդդին զօրավարները և սպայակոյտի պետ Ըսմէթ բէյ:

---

*) Сводка Развѣд. Отд. Штаба Ком. Войсками Арменіи, 3 сент. 1920 г. № 21 (Приложеніе).